

«Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում և կառավարում» մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն

«Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում և կառավարում» մագիստրոսական ծրագիրը նպատակաուղղված է ժամանակակից աշխատանքային շուկայում նոր հմտություններով և կարողություններով այնպիսի մասնագետների պատրաստմանը, որոնք կունենան բարձր պահանջարկ նաև այն պարզ պատճառով, որ իրենց մասնագիտական նկարագիրը կներառի ինչպես կառավարչական ժամանակակից հատկանիշներ, այնպես էլ՝ հանրային ծառայությունների ոլորտի առանձնահատկություններին գերազանց լավատեղյակ տեղեկատվական և մասնագիտական հենք:

Մագիստրոսական կրթական ծրագրի իրականացման արդյունքում մագիստրոսը տիրապետում է ինչպես բիզնես, այնպես էլ պետական համապատասխան կառույցներում կառավարչի նկատմամբ առկա պահանջներին, մասնագիտական ոլորտների ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման առանձնահատկություններին:

Շրջանավարտներին շնորհվում է **«Կառավարման մագիստրոս»** որակավորում:

Մագիստրոսական ծրագիրը մշակվել է ինչպես ոլորտի ղեկավար անձնակազմի, այնպես էլ գիտակրթական շրջանակների լավագույն մասնագետների կողմից:

Ուսման վճարը մեկ տարվա համար 700.000 ՀՀ դրամ է, ամբողջ ծրագրի արժեքը 1 մլն. 50 հազ. ՀՀ դրամ է:

Մասնագիտության նկարագիրը

Մագիստրոսական ծրագրի ավարտին շրջանավարտները տիրապետում են գազաբաշխման և գազամատակարարման, էլեկտրաէներգետիկայի ոլորտում, ջրային տնտեսության և հեռահաղորդակցության ոլորտում բիզնեսի

կազմակերպման և կառավարման ժամանակակից գործիքներին, բիզնեսի վարման առանձնահատկություններին, սպառողների հետ իրավապայմանագրային հարաբերությունների կազմակերպման արդի պահանջներին և այլն:

Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայությունների ոլորտի հետագա ազատականացումը մոտ ապագայում լայն հնարավորություններ է ստեղծելու՝ առավել ազատ և անկաշկանդ իրականացնելու մեծածավալ ներդրումներ, գործարկելու նոր ձեռնարկատիրական ուղղություններ: Ուստի շրջանավարտների համար բացվելու են նոր հնարավորություններ, նաև՝ հաշվի առնելով ԵԱՏՄ շրջանակներում նոր և մեծ միասնական շուկաների ձևավորումը:

Ծրագրում ներառվում են բիզնեսի կազմակերպում, մարքեթինգ, ձեռնարկատիրության կազմակերպում, ֆինանսական կառավարում և այլ ժամանակակից գիտակարգեր: Ծրագրի շրջանակներում մանրամասն ուսումնասիրվելու են ինչպես օրենսդրության, այնպես էլ վարչարարության հարցերը մեր հանրապետությունում:

Դասախոսելու են պետական կառավարման համակարգի բարձրագույն պաշտոնյաներ, էներգետիկայի և ջրային տնտեսության ոլորտների ընկերությունների տնօրեններ, փորձառու մասնագետներ: Կարևորն այն է, որ ծրագրի շրջանակներում Դուք մշտապես հանդիպելու եք մեր հանրապետության լավագույն և Ձեզ ծանոթ պետական և տնտեսական գործիչներին:

Աշխատանքի հնարավորություններ

Կրթական ծրագիրը պատրաստվել է հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպման և կառավարման ոլորտում մասնագիտական չափանիշներին համապատասխան՝ հաշվի առնելով արևմտյան բուհերի փորձը, և նպատակաուղղված է այնպիսի մասնագետների պատրաստմանը, որոնց պահանջարկը հայաստանյան տնտեսության մեջ ամեն տարի աճում է: Տվյալ ծրագրի շրջանակում ոլորտի առաջատար կազմակերպությունների հետ նախատեսվում է սերտ համագործակցություն՝ ուսանողների փորձառության վայրի և հետագա աշխատանքի տեղավորման խնդիրների հարցում:

Շրջանավարտները ուսումնառությունից հետո կարող են աշխատել ինչպես տվյալ ոլորտում, այնպես էլ ժամանակակից տնտեսության այլ ոլորտներում, քանի որ տիրապետելու են բիզնեսի կազմակերպման և կառավարման ժամանակակից

մեթոդներին, նաև՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններին:

Այսօր հայտնի է, որ մեր հանրապետությունում որքան կարևորություն ունեն էներգետիկան, ջրային տնտեսությունը, նաև հեռահաղորդակցությունը, և առանց տնտեսության այս ճյուղերի արդյունավետ կենսագործունեության՝ անհնար է պատկերացնել մեր հանրապետության հանրային կյանքի բնականոն ընթացքը: Իսկ դա նշանակում է, որ վերոնշյալ ոլորտի ընկերություններում մշտապես լինելու է լավագույն մասնագետների բարձր պահանջարկ՝ համապատասխան բարձր աշխատավարձով:

Կրթական ծրագիրը ղեկավարելու է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Միքայել Մելքումյանը: